
ՀՀ-ՈՒՄ IN REM ՎԱՐՈՒՅԹԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՐՈՇ ԽՆԴՐԱՀԱՐՈՒՅՑ ՀԱՐՑԵՐ

ԱՐՓԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, ՄԱՐԻԱՆՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հայաստանի Հանրապետությունում բավականին երկար ժամանակ քննարկվում էր առանց դատավճռի գույքի բռնագանձման ինստիտուտի ներդրման հարցը: 2020 թվականի ապրիլի 16-ին Ազգային ժողովը երկրորդ ընթերցմամբ ընդունեց այդ գործիքը ներդնող օրենքը: Ինստիտուտի ներդրման օգտին խոսում են մի շարք միջազգային փաստաթղթեր: Գոյություն ունի վիճակագրական տվյալների բավականին լայն շտեմարան, որը հիմնավորում է հանցավորության դեմ պայքարի և հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքը շրջանառությունից հանելու գործընթացում այդ գործիքի կիրառման արդյունավետությունը: ՀՀ-ում in rem վարույթը կարգավորվելու է «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքով¹: Թեև նման վարույթի գոյությունը ՀՀ-ում կարող է ընդհանուր առմամբ արդարացված լինել, թե՛ օրենքը և թե՛ դրա հիմնավորումները շատ առումներով թերի են: Արդյունքում նման խմբագրությամբ օրենքը կարող է առաջացնել ավելի լուրջ խնդիրներ: Սույն հոդվածում կանդիդատանք միայն ամենավիճահարույց հարցերին:

Իբրև օրենքի անհրաժեշտությունը հիմնավորող միջազգային հանձնարարական՝ վկայակոչվում են StAR (Stolen asset recovery) նախաձեռնությունը, ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ կոնվենցիան», ՄԻԵԴ-ի որոշ դիրքորոշումներ և ԵՄ փաստաթղթեր²:

ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ կոնվենցիան»³ 54-րդ հոդվածով առաջարկում է պետություններին քննարկել այնպիսի միջոցներ ձեռնարկելու մասին հարցը, որոնք կարող են անհրաժեշտ լինել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագրավման հնարավորություն ստեղծելու համար՝ առանց քրեական վարույթի շրջանակներում դատավճիռ կայացնելու, երբ հանցագործը չի կարող հետապնդվել մահվան, թաքնվելու կամ բացակայելու պատճառով կամ այլ համապատասխան դեպքերում: Կոնվենցիայի տեքստից բխում է, որ առանց դատավճռի գույքի

¹ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության օրենքը ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին», ընդունվել է 16.04.2020 թ., Կ-438-10.01.2020-ՊԲ-011:

² Տե՛ս օրենքի նախագծի հիմնավորումը, <https://www.e-draft.am/projects/1931/about>

³ Տե՛ս ՄԱԿ-ի՝ Կոռուպցիայի դեմ կոնվենցիա, https://www.unodc.org/documents/brussels/UN_Convention_Against_Corruption.pdf

բռնագանձումը կիրառվում է ծայրահեղ դեպքերում, երբ հանցագործը չի կարող հետապնդվել: Կոնվենցիան չի նախատեսում նման գործընթացի կիրառում այն դեպքերում, երբ հնարավոր է անձի հետապնդումն իրականացնել քրեական վարույթի շրջանակներում, ավանդական եղանակով ապացուցել նրա մեղավորությունը և միայն դրանից հետո բռնագանձել ապօրինի միջոցները: Վերոնշյալ օրենքի 5-րդ հոդվածում չկա որևէ ձևակերպում, որ կարող է հուշել քրեական վարույթին նախապատվություն տալու մասին: Հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը հուշում է, որ քրեական և քաղաքացիական վարույթները կարող են ընթանալ զուգահեռ, իսկ նույն մասի 5-րդ կետը հնարավորություն է տալիս քաղաքացիական վարույթը սկսելու անգամ այն պայմաններում, երբ քրեական գործ հարուցված չէ: Այնինչ միջազգային փորձը ցույց է տալիս, որ առանց դատավճռի գույքի բռնագանձումը պետք է դիտարկվի որպես բացառիկ միջոց և կիրառվի այն դեպքում միայն, երբ մեղադրյալի կամ կասկածյալի բոլոր իրավունքները երաշխավորող քրեական վարույթի իրացումն անհնար է: Քաղաքացիական և քրեական վարույթները զուգակցելու պրակտիկան շատ տարածված է ԱՄՆ-ում⁴: Սակայն անգամ ԱՄՆ-ում այս ինստիտուտի պատմական զարգացումը վկայում է այն մասին, որ *in rem* վարույթը պիսի գործի այն դեպքում, երբ *in personam* վարույթն ինչ-ինչ պատճառներով անհնար է⁵:

StAR⁶ նախաձեռնության վերաբերյալ ուղեցույցը նշում է առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման արդյունավետությունը՝ միաժամանակ պահանջելով, որ պետությունները հստակեցնեն, թե որ պետական մարմինն է ստանձնում գույքի բռնագանձման հայց ներկայացնելու պարտավորությունը: Օրենքով սահմանվել է, որ այդ պարտականությունն իրացնում է դատախազությունը՝ պետության շահերի պաշտպանության շրջանակներում հայց ներկայացնելու միջոցով: Այս առումով օրենքը խնդրահարույց է, քանի որ ՀՀ Սահմանադրությունը⁷, 176-րդ հոդվածում նախատեսելով դատախազության լիազորությունների սպառիչ ցանկը, նշում է, որ դատախազությունը պետական շահերի պաշտպանության հայցը հարուցում է օրենքով սահմանված բացառիկ դեպքերում: Այնինչ ամրագրելով ապօրինի գույքի բռնագանձման հայցի համար հիմք հանդիսացող հանցագործությունների բավական ընդարձակ ցանկ՝ ստեղծվում է մի իրավիճակ, երբ դատախազությունը կարող է իր բացառիկ լիազորությունն իրացնել անընդհատ, ոչ թե բացառիկ դեպքերում: Բացի այդ, դատախազության այդ լիազո-

⁴ St' u <https://www.justice.gov/sites/default/files/usao/legacy/2007/12/21/usab5506.pdf>

⁵ St' u https://www.yalelawjournal.org/pdf/g.2446.Nelson.2518_k3hspxbe.pdf

⁶ St' u United Nations Office on Drugs and Crime (UNODC) and the World Bank, “Stolen Asset Recovery (StAR) Initiative: Challenges, Opportunities, and Action Plan” (Washington, DC: World Bank 2007), էջ 10:

⁷ St' u Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, ընդունված 06.12.2015:

րությունն ուղղված է պետությանը հասցված վնասը վերականգնելուն, ոչ թե երրորդ անձանց կրած վնասի հատուցմանը: Շատ դեպքերում, ինչպես, օրինակ, յուրացման կամ վատնման դեպքում, ոսոնահարվում են ոչ թե պետության, այլ երրորդ անձանց շահերը: Այդ պայմաններում խիստ անհասկանալի է, թե ինչու է դատախազությունը հարուցում պետական շահերի պաշտպանության հայց, եթե պետությունը գույքային վնասներ չի կրել:

Մրա հետևանքով ոսոնահարվում է ոչ միայն Սահմանադրության 176-րդ հոդվածը, այլև 6-րդ հոդվածը, համաձայն որի՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

Օրենքի հիմնավորման մեջ վկայակոչվում են Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք դիրքորոշումներ՝ ցույց տալու համար, որ նմանատիպ նախագծերը կոնվենցիայի տեսանկյունից խնդրահարույց չեն:

Դրանցից ամենակարևորը, թերևս, Գոգիթիձեն և մյուսներն ընդդեմ Վրաստանի գործն է⁸, որը վերաբերում է հենց գույքի բռնագանձման քաղաքացիաիրավական ինստիտուտին: Թեև ՄԻԵԴ-ը ճանաչել է *in rem* բռնագանձման միջազգայնորեն ընդունված չափանիշները, այդ թվում՝ ապացուցողական շեմի իջեցումը, երրորդ անձանցից գույքի բռնագանձման հնարավորությունը, սակայն այս գործի և ՀՀ օրենքում առաջարկվող կարգավորումներից մի մասի միջև կան լուրջ տարբերություններ, որոնք հաշվի չեն առնվել: Գանգատի երկրորդ մասում անդրադառնալով սեփականության իրավունքին միջամտելու օրինականությանն ու համաչափությանը՝ ՄԻԵԴ-ը նշել է, որ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման օրենքը ոչ թե նոր կոնցեպտ է սահմանում, այլ հարաբերությունները նորովի կարգավորող օրենք է, քանի որ Վրաստանի «Հանրային ծառայության մասին» օրենքը 1997 թվականից ի վեր կարգավորում էր պաշտոնատար անձանց կողմից հայտարարագիր ներկայացնելու և եկամուտների օրինականությունը հիմնավորելու պահանջները: ՀՀ-ում «Հանրային ծառայության մասին օրենքը» ընդունվել է 2011 թվականին: Սա նշանակում է, որ գոնե մինչև այդ ենթադրաբար տեղի ունեցած խախտումների առումով առանց դատավճռի գույքի բռնագանձման ինստիտուտը կիրառելի համարվել չի կարող, քանի որ այդ դեպքում քաղաքացիական գործով պատասխանողների վրա դրված ապացուցման բեռը չի կարող համարվել համաչափ: Բացի այդ, հայտարարագրերի բացակայության պայմաններում դատախազությունը դժվար թե կարողանա ինչ-որ կերպ հիմնավորել անհամապատասխանությունը օրինական եկամուտների և ձեռք բեր-

⁸ Տե՛ս Գոգիթիձեն և մյուսները ընդդեմ Վրաստանի գործով 12/05/2015 թ. վճիռը, <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-154398>

ված գույքի արժեքի միջև, ինչի դեպքում էլ ստեղծվում է իրավիճակ, որ օրենքի գործողությունը տարածվելու է 1991 թ.-ից սկսած ժամանակահատվածի վրա, բայց փաստացի հնարավոր է լինելու իրացնել 2011 թ.-ից սկսած ժամանակահատվածի առումով միայն: Այսինքն՝ 1991-2011 թվականների դեպքերի առնչությամբ *in rem* վարույթի հարուցման դեպքում ՄԻԵԴ-ը կարող է նաև համարել, որ պետությունը հետագայում սահմանել է այդ հարաբերություններին վերաբերող նոր կոնցեպտ և դրան հետադարձ ուժ տալով՝ խախտել սեփականության իրավունքին միջամտելու համաչափության սկզբունքը:

ՄԻԵԴ նախադեպերի ուսումնասիրությունից դժվար չէ նկատել, որ վկայակոչված գրեթե բոլոր նախադեպերն ուղղված են Միացյալ Թագավորության դեմ: Ջարմանալի չէ, որ ՄԻԵԴ-ը այս գործերով խախտումներ չի արձանագրել, որովհետև Մեծ Բրիտանիայի հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքին վերաբերող ակտը⁹ խիստ ծավալուն և *in rem* վարույթը մանրակրկիտ կարգավորող օրենք է, որում պատասխանողի վրա ապացուցման բեռը դրվում է սովորաբար այն դեպքում, եթե նա մեկ անգամ արդեն դատապարտվել է նախատեսված ծանր հանցանքի համար: Այդ ակտով կարգավորվում են թե՛ բռնագանձված միջոցների օգտագործման և թե՛ տուժողների վնասների հատուցման կարգի հետ կապված հարցերը: Ներպետական օրենքի նախագիծը բացառապես սահմանում է, որ միջոցները բռնագանձվում են հօգուտ Հայաստանի Հանրապետության՝ չհստակեցնելով, թե՛ ինչ ընթացակարգով են այդ միջոցները հանձնվելու տուժողներին: Փաստացի միտված լինելով տուժած երրորդ անձանց իրավունքների պաշտպանությանը՝ օրենքը դրա ապահովման որևէ մեխանիզմ չի նախատեսում:

Հիմնական միտքը, որ պարբերաբար արտահայտվել է ՄԻԵԴ դիրքորոշումներում՝ կապված ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ինստիտուտի հետ, վերաբերում է անմեղության կանխավարկածին՝ պնդելով, որ անմեղության կանխավարկածի սկզբունքը կիրառելի չէ ոչ քրեական վարույթների նկատմամբ: Այս տեսանկյունից անհրաժեշտ է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ այս գործերով վճիռները բավականին հին են, այնինչ ԱՄՆ-ի գերագույն դատարանի՝ ընդամենը 3 տարի առաջ կայացած նախադեպը անմեղության կանխավարկածի առումով ունի հակառակ դիրքորոշումը: Սա կարևոր է հիմնականում այն պատճառով, որ ինչպես ՄԻԵԴ-ը, այնպես էլ ՀՀ ներպետական դատարանները հաճախ են հղում անում ԱՄՆ դատական նախադեպերին:

Այսպես, Նելսոնն ընդդեմ Կոլորադոյի գործով ամբաստանյալները

⁹ Ավելի մանրամասն տե՛ս «Proceeds of crime act», 2002, <https://www.legislation.gov.uk/ukpga/2002/29/contents>

արդարացվել էին, որից հետո դիմել էին քաղաքացիական դատավարության կարգով հետ ստանալու պետության կողմից իբրև ապօրինի ծագում ունեցող գույք բռնագանձված միջոցները: Դատարանը նշել էր, որ արդարացվածները պարտականություն ունեն ապացուցելու իրենց անմեղությունը՝ գույքը հետ ստանալու համար: ԱՄՆ գերագույն դատարանը բեկանեց այս որոշումը՝ նշելով, որ անձը, որը անմեղ է ճանաչվել քրեական դատավարության կարգով, այլևս չպետք է կրի իր անմեղությունը ապացուցելու որևէ բեռ¹⁰: Գերագույն դատարանին տրված խորհրդատվական կարծիքներից մեկում արտահայտվել էր այն դիրքորոշումը, որ անձը չպետք է կրի իր անմեղությունն ապացուցելու բեռը: Եթե դա արվում է քրեական դատավարության շրջանակներում, ապա արդար դատաքննության սահմանադրական իրավունքը միանշանակորեն խախտվում է: Դատարանի այս որոշումն իրականում նշանակում է, որ անմեղության կանխավարկածը չի կարելի շրջանցել նաև քաղաքացիական դատավարության ընթացքում:

Այս մոտեցումը կարևոր է հատկապես այն պատճառով, որ ներպետական օրենքը, հստակ տարբերակելով քաղաքացիական և քրեական վարույթները, չի նախատեսում որևէ ընթացակարգ արդարացված անձի կողմից իրեն պատկանող գույքը ետ ստանալու համար: Նման կարգավորումների պայմաններում *in rem* վարույթը դառնում է գործիք իրավապահ մարմինների ձեռքին՝ առավել ցածր ապացուցողական չափանիշով անձանց իրենց գույքից զրկելու համար, անգամ եթե վերջիններիս անմեղությունը ճանաչվում և հռչակվում է քրեական վարույթում վերջնական դատական ակտով: «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասում նշվում է, որ արդարացնող դատավճիռ կայացնելը կամ արդարացնող հիմքով գործի վարույթը կարճելը կամ քրեական հետապնդումը դադարեցնելը հիմք չէ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթը դադարեցնելու համար: Եթե դիտարկենք ուսումնասիրություն սկսելու հիմքերը, կնկատենք, որ այդպիսիք բացառապես ոչ արդարացնող հիմքով գործերի վարույթը կարճելը կամ քրեական հետապնդումը դադարեցնելը նախատեսող հիմքեր են: Նման կարգավորումն ստեղծում է բավականին խնդրահարույց և խտրական իրավիճակ. մասնավորապես, եթե քրեական վարույթն արդարացնող հիմքով ավարտված է եղել մինչև քաղաքացիական վարույթն սկսվելը, ապա դա արգելք է ուսումնասիրություն սկսելու համար, իսկ նույն փաստական հանգամանքների առկայությամբ մեկ այլ դեպքում, երբ քրեական և քաղաքացիական վարույթներն ընթացել են զուգահեռ, անձի արդարացումը չի գրկում իրավասու մարմնին ապացուցողական ավելի ցածր շեմով անձին սեփականությունից զրկելու հնարավորությունից:

¹⁰ Տե՛ս <https://www.forbes.com/sites/wlf/2017/06/29/supreme-courts-presumption-of-innocence-decision-should-inspire-asset-forfeiture-reformers/#16313ff07e41>

Բացի այդ, անձի արդարացումը քրեական վարույթում կարող է իրականացվել մի քանի հիմքով: Եթե անձի արդարացումն ապացույցների անբավարարության հիմքով ինչ-որ առումով կարող է արդարացնել քաղաքացիական վարույթը շարունակելը, ապա նույնը չի կարելի ասել հանցադեպի կամ հանցակազմի բացակայության հիմքով արդարացնելու դեպքերի մասին: Հանցադեպի բացակայությունն արդեն իսկ նշանակում է, որ հանցավոր արարք տեղի չի ունեցել, հետևաբար ազդակը, որը ուսումնասիրության հիմք է հանդիսացել, իրականում բացակայում է: Այդ պայմաններում անհասկանալի է, թե ինչու պետք է շարունակվի գույքի բռնագանձման վարույթը: Նելսոնն ընդդեմ Կոլորադոյի որոշման մեջ արտահայտված իրավական հիմնավորումների համատեքստում նման իրավիճակներում արդարացված անձի վրա դրվում է ապացուցման անհամաչափ բեռ:

Օրենքը 3-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանում է այն հանցագործությունները, որոնց առկայությունը կարող է հիմք դառնալ ուսումնասիրություն սկսելու համար: Կարծում ենք, որ ընտրված հանցագործությունների շրջանակը խիստ խնդրահարույց է: Նախ, հարկ է նկատել, որ այս օրենքը, ընդունված լինելով կոռուպցիայի դեմ պայքարի համատեքստում, չի ներառել այնպիսի հանցագործություններ, ինչպիսիք են ապօրինի կամ կեղծ ձեռնարկատիրությունը: Յուրացման և խարդախության հանցակազմերի առկայությունը հիմք է ուսումնասիրություն սկսելու համար, եթե հանցանքը կատարվել է պաշտոնատար անձի կողմից կամ եթե կատարվել է առանձնապես խոշոր չափերով կամ կազմակերպված խմբի կողմից: Վերջին երկու դեպքերի համար սահմանված է ևս մեկ լրացուցիչ պայման, այն է՝ եթե կատարվել է պաշտոնեական դիրքն օգտագործելով: Ստացվում է, որ պաշտոնատար անձ չընդգրկող կազմակերպված խմբերի կողմից խարդախությունը կամ յուրացումը/վատնումը չի հանգեցնում ապօրինի գույքի բռնագանձման վարույթի: Սա առնվազն խնդրահարույց է այն տեսանկյունից, որ առանց դատավճռի գույքի բռնագանձման օրենքները միջազգային հարթակում առավելապես քաջալերվում են կազմակերպված հանցավորության դեմ տարվող պայքարի ուժեղացման համար, այնինչ այս օրենքը դուրս է թողնում կազմակերպված հանցավորության դեմ պայքարը առնվազն այն դեպքերում, երբ խումբը զբաղվում է խարդախությամբ կամ յուրացմամբ/վատնմամբ: Իսկ, օրինակ, քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածը հիմք է ուսումնասիրություն սկսելու, եթե կատարվել է կազմակերպված խմբի կողմից, ընդ որում՝ նման դեպքում պաշտոնատար անձի մասին որևէ նշում չկա: Ստացվում է, որ մի դեպքում կազմակերպված հանցավորության դեմ պայքարի համատեքստում *in rem* վարույթի կիրառությունը արդարացված է, մյուս դեպքում՝ ոչ, քանի դեռ կազմակերպված խմբում չկա պաշտոնեական դիրքն օգտագործող անձ: Տարբերակված այս մոտեցումն արդարաց-

ված չի թվում: Մինևույն ժամանակ հարկ է ընդգծել, որ միջազգային փաստաթղթերը ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման քաղաքացիաիրավական ինստիտուտը նախատեսում են բավականին սահմանափակ հանցագործությունների համար՝ փողերի լվացում, ահաբեկչության ֆինանսավորում, թրաֆիքինգ, թմրանյութերի ապօրինի շրջանառություն: Այսինքն՝ ընտրված են այնպիսի հանցագործություններ, որոնց դեմ քրեաիրավական միջոցներով պայքարելը խիստ անարդյունավետ է, իսկ հասարակության համար այդ հանցանքները առանձնապես վտանգավոր են: Ներպետական օրենքի որդեգրած մոտեցումն այս առումով շեղվում է միջազգային փաստաթղթերի տրամաբանությունից՝ սահմանելով խիստ լայն ցանկ: Կարծում ենք՝ տեղին է մեջբերել ԱՄՆ գերագույն դատարանի՝ Թիմբսն ընդդեմ Ինդիանայի գործով 2019 թվականի փետրվարի որոշումը, որով Գերագույն դատարանը հաստատել է, որ քաղաքացիական կարգով առգրավվող գույքը և ենթադրաբար կատարված հանցանքը պետք է համաչափ լինեն: Հակառակ դեպքում դա ոտնահարում է Սահմանադրության 8-րդ փոփոխության պահանջն առ այն, որ ոչ ոք չի կարող ենթարկվել չափազանց մեծ տուգանքի կամ անհամաչափ պատժի¹¹:

9-րդ հոդվածը սահմանում է ուսումնասիրության գաղտնիությունը: Գաղտնի է նաև քրեական գործերով մինչդատական վարույթը, սակայն դրա նկատմամբ կա դատախազական հսկողության և դատական վերահսկողության հնարավորություն: Այս առումով այն, որ մինչև 3 տարի ձգվող պրոցեսը ընթանում է գաղտնի և որևէ կերպ չի վերահսկվում, կարող է լուրջ չարաշահումների տեղիք տալ: Այս օրենքով և փաթեթում ներառված մյուս օրենքների փոփոխություններով նախատեսվում է, որ դատախազը ուսումնասիրության շրջանակներում իրավունք ունի ստանալու բանկային և այլ գաղտնիք հանդիսացող տեղեկություններ: Այստեղ հարկ է նշել, որ քրեական վարույթում մեղադրյալը մինչդատական վարույթի ավարտին իրավունք ունի ծանոթանալու բոլոր նյութերին և այդ փուլում բողոքարկելու նաև բանկային գաղտնիք տրամադրելը թույլատրող դատարանի որոշման իրավաչափությունը¹²: Այնինչ քաղաքացիական բռնագանձման վարույթում գաղտնիք հանդիսացող տեղեկությունների տրամադրման թույլտվությունը անձի կողմից բողոքարկելու ընթացակարգը շատ թերի է կարգավորված: Նախ, օրենքի 12-րդ հոդվածը սահմանում է, որ դատարանը բավարարելու որոշման մասին ծանուցում է միայն իրավասու մարմնին: Ուսումնասիրության ընթացքի մասին իրավասու մարմինը ծանուցում է շահագրգիռ անձանց, սակայն ծանուցման պարտականություն նախատեսված է միայն նախնական ապահովման բոլոր միջոցներ

¹¹ Տե՛ս <https://supreme.justia.com/cases/federal/us/586/17-1091/#tab-opinion-4054116>

¹² Տե՛ս ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, ընդունված 01.07.1998, ՀՕ-248, հոդված 278:

րը կիրառելու կամ ուսումնասիրության ավարտից հետո: Մտացվում է, որ օրենքում նախատեսված է շահագրգիռ անձի կողմից գաղտնիք հանդիսացող տեղեկությունների տրամադրման մասին որոշումը բողոքարկելու հնարավորություն, բայց որևէ մարմին պարտականություն չունի ուսումնասիրության ընթացքում շահագրգիռ անձին ծանուցելու նման որոշման առկայության մասին, հատկապես եթե նախնական ապահովման միջոցներ չեն կիրառվել: Բացի այդ, օրենքում նշվում է, որ ուսումնասիրության ընթացքի որոշումը շահագրգիռ անձի կողմից բողոքարկելու դեպքում չի ընդհատվում: Այդ ընթացքում ուսումնասիրությունը կարող է ավարտվել, և իրավասու մարմինը կարող է հայց հարուցել, քանի դեռ շահագրգիռ անձը վիճարկում է գաղտնիք հանդիսացող տեղեկություն տրամադրելը թույլատրող դատական ակտը: Մտեղծվում է մի իրավիճակ, երբ մի դատարանը քննում է գործը, իսկ մյուսը ստուգում ապացույցի թույլատրելիությունը: Մա անընդունելի է այն առումով, որ ապացույցների հետազոտումը պետք է իրականացնի գործը քննող դատարանը անմիջականորեն և անձամբ: Բացի այդ, խիստ անորոշ է նաև այն հարցի պատասխանը, թե ինչ հետևանքներ է ունենալու մի դատարանի կողմից բանկային գաղտնիք ստանալը թույլատրող որոշումը ոչ իրավաչափ ճանաչելը, եթե մինչ այդ մյուս դատարանը բռնագանձումը թույլատրած լինի, և գույքը իրացված լինի:

Խիստ վիճահարույց է նաև գույքի նկատմամբ ապահովման միջոցներ կիրառելու վերաբերյալ օրենքի 14-րդ հոդվածը: Այն սահմանում է, որ եթե դատարանը թույլ է տալիս նման միջոց կիրառելը, ապա դատախազն ունի որոշումը ստանալու պահից սկսած 6 ամիս ժամանակ հայց ներկայացնելու համար: Այս ժամանակահատվածը խիստ երկար է հաշվի առնելով, որ անձը կարող է գրկվել իր գույքը տիրապետելու, տնօրինելու կամ օգտագործելու հնարավորությունից այն պայմաններում, երբ անգամ հայց ներկայացված չէ: Համեմատության համար նշենք ԱՄՆ-ի փորձն այս առումով: Նման դեպքերում դատախազությունն ունի ընդամենը 90 օր ժամանակ՝ հայց ներկայացնելու համար: Եթե թեկուզ մեկ օր ուշացումով հայցը ներկայացվի, ապա վարույթը համարվում է դադարեցված՝ առանց վերսկսելու հնարավորության¹³: Դժվար չէ նկատել, թե ինչքան մեծ է ԱՄՆ-ում և ՀՀ-ում նախատեսվող ժամկետների տարբերությունը:

Օրենքի 22-րդ հոդվածը, որը նախատեսում է ապացուցման բեռի բաշխման կանոնները, նշում է, որ գործում է գույքի ապօրինի ծագում ունենալու կանխավարկածը: Միևնույն ժամանակ, 16-րդ հոդվածը սահմանում է, որ անձի կողմից հայտարարագիր կամ դիրքորոշում ներկայացնելուց հրաժարվելը չի կարող մեկնաբանվել և օգտագործվել անձի կամ նրա ընտանիքի անդամների դեմ: Այս երկու դրույթները գո-

¹³ St' u <https://www.justice.gov/sites/default/files/usao/legacy/2007/12/21/usab5506.pdf>, էջ 18:

նե առերևույթ հակասում են միմյանց, որովհետև գույքի ապօրինի ծագում ունենալու կանխավարկածը հերքելու միակ ուղին շատ դեպքերում հայտարարագիր ներկայացնելն է, որը չանելու դեպքում գույքը բռնագանձվում է, հետևաբար չներկայացնելն օգտագործվում է անձի դեմ: Քաղաքացիական դատավարության օրենսգրքի ընդհանուր կանոնի համաձայն ևս՝ եթե բոլոր ապացույցների հետազոտումից և գնահատումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները բաժին են ընկնում այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող անձին¹⁴: Հետևաբար, հայտարարագիրը ներկայացնելուց հրաժարվելու հետևանքները ի վնաս անձի մեկնաբանելու արգելք չի բխում ո՛չ սույն օրենքի, ո՛չ էլ քաղաքացիական դատավարության օրենսգրքի տրամաբանությունից: Նույն համատեքստում անտրամաբանական է նաև օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ մասը:

23-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ անձը համարվում է բարեխիղճ ձեռքբերող, եթե ապացուցում է, որ գույքը իրեն փոխանցվել է որպես կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցում կամ ալիմենտ: Այս կարգավորումը խնդիրներ չի առաջացնում, եթե կա ալիմենտի բռնագանձման մասին դատական ակտ կամ վճիռ կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցման պահանջը բավարարելու վերաբերյալ: Սակայն դրանց բացակայության պայմաններում, եթե, օրինակ, վճարումները կատարվել են կամավոր, առանց դատական ակտի, այդ հանգամանքը ապացուցելը դժվարանում է, որովհետև վկաների ցուցմունքները շատ դեպքերում կարող են չդիտվել որպես արժանահավատ ապացույց:

Ի վերջո, խիստ տարակարծությունների տեղիք է տալիս նաև 24-րդ հոդվածը, որը մատնանշում է, որ գույքը բռնագանձվում է հօգուտ Հայաստանի Հանրապետության: Դա մասնավորապես նշանակում է, որ եթե անձը հանցագործության պատճառով վնաս է կրել, պետությունը քաղաքացիական կարգով բռնագանձված գույքը չի ծառայեցնում այդ անձի կրած վնասների հատուցմանը: Ավելին, եթե անձը քրեական վարություն ներգրավված է որպես տուժող, բայց գուգահեռ ընթացող քաղաքացիական վարույթով պետությունը բռնագանձում և իրացնում է տուժողից հանցագործությամբ խլված գույքը, ապա ենթադրյալ հանցագործի մեղավորությունը հաստատվելու դեպքում անգամ չկա որևէ կառուցակարգ, որով տուժողը կարող է իրեն պատկանող գույքը հետ ստանալ՝ բացառությամբ հանցագործությամբ պատճառված վնասները քաղաքացիական կարգով պահանջելու ընթացարգի, սակայն այդ դեպքում էլ ստացվում է, որ անձը պահանջում է գույք հանցագործության մեջ մեղավոր ճանաչված անձից այն դեպքում, երբ այդ գույքն արդեն

¹⁴ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքը, ընդունված 09.02.2018 թ., ՀՕ-110, հոդված 62, մաս 6:

բռնագանձվել է հոգուտ պետության: Փաստորեն, եթե անձր չի ընդգրկվել շահագրգիռ անձանց շրջանակում, նա գրկվում է իր գույքը ետ ստանալու հնարավորությունից: Դրանով պետությունը խուսափում է նաև սոցիալական արդարությունը վերականգնելու և հանցագործությունից տուժած անձանց իրավունքները վերականգնելու պարտականությունից, ինչը ոչ մի կերպ չի կարող արդարացվել:

Այս օրենքին գուգահեռ՝ փոփոխություններ են նախատեսվել նաև այլ օրենքներում, որոնցից հատկապես խնդրահարույց է «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքում կատարվելիք փոփոխությունը:

Բանկային գաղտնիք հանդիսացող տեղեկությունների տրամադրումն իրավապահ մարմիններին ներկայիս կարգավորումներով կարող է իրացվել միայն կասկածյալի կամ մեղադրյալի առնչությամբ: Օրենքում փոփոխություն նախատեսող դրույթները, համաձայն որոնց՝ հնարավոր է բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ ստանալ նաև այլ անձանց մասին, սահմանադրականության տեսանկյունից վիճահարույց են համարվել, և ՀՀ նախագահը այն ուղարկել է Սահմանադրական դատարան: Եթե դատարանն այդ կարգավորումները համարի հակասահմանադրական, ապա այս և հարակից նախագծերում սահմանված դրույթները չեն կարող սահմանադրական համարվել և կիրառվել միայն այն պատճառով, որ քրեական վարույթի շրջանակներից դուրս են:

«Դատախազության մասին» ՀՀ օրենքով նախատեսվում է փոփոխություն, համաձայն որի՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթով զբաղվող ստորաբաժանման դատախազների համար պահանջվում է 2 տարվա աշխատանքային ստաժ, իսկ տարիքային ցենզ սահմանվել է 22 տարեկանը: «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքով նման վարույթով զբաղվող դատախազների համար սահմանվել են պաշտոնային դրույքաչափերի հաշվարկման ավելի բարձր գործակիցներ, ինչը օրենքի հեղինակների կողմից հիմնավորվել է փորձառու մասնագետներ ներգրավելու անհրաժեշտությամբ: Այդ պայմաններում բավականին անհասկանալի է տարիքային ցենզի և մասնագիտական ստաժի այդչափ իջեցումը:

Ընդհանուր առմամբ, դրական պետք է գնահատել մեր հնչեցրած մտահոգությունների արդյունքում օրենքի ընդունված տարբերակում բարեխիղճ երրորդ անձանց՝ իրենց բարեխղճությունն ապացուցելու անհամաչափ բեռի վերացումը, օրենքի գործողությունը մեծ մասամբ 2010-2020 թվականներով սահմանափակելը, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման շեմը 25 միլիոն դրամից 50 միլիոն դրամ բարձրացնելը: Այնուամենայնիվ, երբ դիտարկում ենք ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթը, ակնհայտ է դառնում, որ դրանում չի գործում կողմերի հավասարության սկզբունքը: Քրեական

վարույթում մեղադրող կողմին տրամադրելով լայն գործիքակազմ՝ մեղադրյալին տրվում են պաշտպանության լայն երաշխիքներ՝ այդպիսով ապահովելով որոշակի հավասարակշռություն: Քաղաքացիական դատավարության տրամաբանությամբ՝ կողմերին տրվում են հավասար հնարավորություններ: Իսկ այս օրենքով քաղաքացիական դատավարության շրջանակներում մի կողմին տրվում է քրեական վարույթին համարժեք գործիքակազմ, իսկ մյուս կողմին՝ ոչ մի երաշխիք՝ ոչ անմեղության կանխավարկած, ոչ մյուս կողմի գործողությունները և որոշումները վիճարկելու իրական հնարավորություն, ոչ օրենքով պահպանվող գաղտնի տեղեկությունների իրական գաղտնիություն: Արդյունքում ներմուծվում է մի ինստիտուտ, որը փաստացի քրեական վարույթ է՝ քաղաքացիական վարույթի քողի տակ, ինչը խնդրահարույց է թե՛ անձի հիմնարար իրավունքները և ազատությունները հարգելու ու պաշտպանելու, թե՛ արդարացիության տեսանկյունից:

Բանալի բառեր – *in rem վարույթ, գույքի բռնագանձում, ապօրինի գույք, հետադարձ ուժ, անմեղության կանխավարկած*

АРПИНЕ ОГАННЕСЯН, МАРИАННА ГРИГОРЯН – *Некоторые вопросы, связанные с принятием in rem производства в Республике Армения.* – В статье всесторонне рассмотрен закон «О конфискации незаконного имущества», который предусматривает применение in rem производства в РА. При анализе нормы законодательства в контексте международных документов, прецедентного права ЕСПЧ и США, а также национального законодательства затронуты многочисленные проблемы. Только в случае решения упомянутых проблем институт будет служить общественному благу, не ставя под угрозу защиту основных прав человека и принципы, признанные в правовых государствах.

Ключевые слова: *in rem производство, незаконное имущество, конфискация имущества, ретроактивное применение закона, презумпция невиновности*

ARPINE HOVHANNISYAN, MARIANNA GRIGORYAN – *Some Issues on the Adoption of in Rem Proceedings in the Republic of Armenia.* – In the framework of this scientific article, the law on illicit property confiscation, which implements the in rem proceedings in RA, has been comprehensively examined. Analyzing the regulations of the law in the context of international documents, the case-law of the ECHR and the USA, and national legislation, many issues have been raised. Only in case of solving the aforementioned issues, the institute will serve the public good without endangering the protection of fundamental human rights and the principles recognized in states governed by the rule of law.

Key words: *in rem proceedings, illicit property, confiscation of property, retroactive application of law, presumption of innocence*

Ներկայացվել է՝ 16.08.2020,
Գրախոսվել է՝ 10.09.2020,
Ընդունվել է տպագրության՝ 30.09.2020